

Հ. Մ. Բարթիկյան

ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՆՈՔԵՐ

Անչափ մեծ է բյուզանդական սկզբնաղբյուրների արժեքը, լինեն նրանք պատմական երկեր կամ ժամանակագրություններ, հալ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար: Բյուզանդական սկզբնաղբյուրների շարքում, սակայն, կան և այնպիսիները, որոնք առաջին հայացքից հայագետի համար ոչ մի արժեք չպետք է որ ներկայացնեն: Դրանք բյուզանդական սրբերի վարքաբանություններ են, սրբերի հրաշապատումներ, զուտ դավանաբանական երկեր, որոնց մեջ, որպես կանոն արժեքավոր շատ քիչ նյութ կա: Այդ տեսակի գրականության մեջ մեզ հաջողվեց հանդիպել այնպիսի փաստերի, որոնք մեր ժողովրդի պատմության ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Մեր սույն նոթերի չորսից առաջին երեքը այդպիսի սկզբնաղբյուրներից են քաղված:

Առաջին նոթը հիմնված է սուրբ Ստեփանոս Նորավկայի (մեռել է 765 թ.) վարքաբանության վրա: Այդ գրված է սբ. Սոֆիայի տաճարի սարկավագ նույնանուն Ատեփանոսի կողմից 807 թ. և իրենից ներկայացնում է Կոնստանդին 5-րդ (741—775 թթ.) պատկերամարտ կայսեր ժամանակաշրջանի մասին արժանահավատ մի ժամանակագրություն: Ինքը հեղինակը գրում է, որ իր պատմածը ճշմարիտ է, որովհետև այն հիմնված է սրբին մոտիկ մարդկանց, նրա ծանոթների, աշակերտների, ինչպես նաև «բռնակալի» (Կոնստանդին 5-րդի) կողմնակիցների հիշողությունների վրա:

Սբ. Ստեփանոս Նորավկայի հալածվել է պատկերամարտ Կոնստանդին 5-րդի կայսեր կողմից և 763 թ. աքսորվել Մարմարայում գտնվող Պրոկոնիսոս կղզին: Նրա կենսագրության մեջ հայագիտության համար արժեք ներկայացնող փաստն այն է, որ 765 թ. Թրակիայում դնտվում էր հայկական մի զորամաս (στῆθος των Ἀρμενίων), որին շատ կարևորություն էր տալիս հիշյալ կայսրը: Այդ հայերը, ամենայն հավանականությամբ նույն Կոնստանդին 5-րդի կողմից մի տասնամյակ առաջ Թեոդոսուպոլսից և Մելիտինից գաղթեցված հայերն էին, որոնց մասին վկայում են բյուզանդական ժամանակագիրներ Թեոփանեսը¹ ու պատրիարք Նիկիիորը², հալ պատմիչ Ղևոնդը³ և ասորի ժամանակագիր Միքայել Ասորին⁴: Այդ բոլորից, իհարկե, ամենից արժեքավորն է Թեոփանեսի

¹ Theophanis Chronographia, ed. C. de Boor, t. II, Lipsiae, 1883, p. 429.

² Nicephori patriarchae Constantinopolitani adv. Const. Copr., Migne, Patrologia graeca, t. 100, col. 508—509.

³ Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց Պատմութիւն, Մ-Պետերբուրգ, 1887, էջ 129:

⁴ Միխայելի Ասորուց պատրիարքի ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 348:

վկայությունը, քանի որ նա միաժամանակ նշում է, թե Թրակիա գաղթեց-վածները տարածեցին պավլիկյան աղանդը:

Իհարկե նորություն չէ հայերի գաղթեցումը Թրակիա: Դա կատարվել է նախկինում Մավրիկիոս կայսեր կողմից, այնպես էլ հետագայում՝ Հովհաննես Չմշկիկի կողմից: Նորություն չէ նաև այն փաստը, որ այդ հայերին բյուզանդական կայսրները օգտագործում էին որպես զինված ուժ՝ ընդդեմ Բյուզանդիայի այդ շրջաններում եղած թշնամիների: Բայց Գոնստանդին 5-րդի գաղթեցրած պավլիկյաններին որպես զինված ուժ օգտագործելու ենթադրությունը չէր հաստատվում և ոչ մի փաստով: Ստեփանոս Նորավկայի վարքարանունը հաստատում է այդ ենթադրությունը

Երկրորդ և երրորդ նոթերը հիմնված են Տրապիզոնի մետրոպոլիտ Հովհաննես Լազարոպուլոսի կողմից գրված սուրբ Եվգենիոսի հրաշապատումների վրա: Լազարոպուլոսը մետրոպոլիտ դարձավ 1364 թ., իսկ 1367 թ., հեռանալով մետրոպոլիտությունից, հաստատվեց Տրապիզոնի սր. էլեուսայի վանքում, ուր և շարադրեց իր աշխատությունը: Վերջինիս վրա հիմնված մեր երկրորդ նոթը խոսում է Բայրերդի մի հայկական վանքի կողմից Տրապիզոնի սր. Եվգենիոսի վանքին հողի վաճառքի մասին: Նույն Լազարոպուլոսի աշխատությունից պարզվում է, որ Տրապիզոնի սր. Եվգենիոսի վանքին պատկանող Բայրերդում գտնվող հողերի վրա աշխատում էին տեղական՝ Բայրերդի բնակիչները, որովհետև վանահայր Եփրեմը «գնում է Բայրերդ քաղաքի շրջակայքում գտնվող գյուղերը՝ հավաքելու համար իր վանքին պատկանող հողերի վրա աշխատողներին»:

Լազարոպուլոսի աշխատության վրա հիմնված մեր երկրորդ նոթը արժեքավոր տեղեկություններ է տալիս Բասենում ապակու արտադրության մասին, որը իհարկե, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միջնադարյան Հայաստանի արհեստներով զբաղվողների համար: Ավելորդ չէ ասել, որ Լազարոպուլոսը ապրած լինելով 14-րդ դարում, նրա տեղեկությունները անկասկած վերաբերում են նախորդ ժամանակաշրջանին:

Մեր չորրորդ նոթը իր տեսակի մեջ հայ աղբյուրագիտության համար մի ունիկալ փաստաթուղթ է. դա Նիկիայի բյուզանդական կայսր Թեոդորոս Լասկարիսի ժողովական թուղթն է ուղղված 1213 թ. Կիլիկիայի թագավոր Լևոն 2-րդին: Այդ փաստաթղթին մենք մանրամասն կանդրադառնանք ստորև:

* * *

1. — Հայկական գորաբանակի գոյության մասին Թրակիայում 765 թ.

(Vita sancti Stephani junioris monachi et martyris, Migne, Patrologia graeca, t. 100, col. 1156).

«Այն նույն օրերին ոմն Ստեփանոս՝ եվրոպական մասի հայկական գորամասի մի զինվոր (στρατιωτης⁵ του στίφους των Ἀρμενίων) կիսաանդամալույծ էր դարձել և ամբողջությամբ կոտորվել էր գետնին: Նա գնաց կղզին, երկրապագեց սրբին ու պաղատեց նրան, ապա անվարան հավատքով համբուրեց Գրիս-

⁵ Сборник источников по истории Трапезундской империи, издал Пападопуло-Керамевс, том 1, С.-Петербург, 1897, стр. 93.

* Տրատիուտիս-ը հասարակ զինվոր չէր, այլ հողաբաժին ստացած զինվոր, որը պարտավոր էր ստացած այդ հողամասի զիմաց զինվորական ծառայություն կատարել բյուզանդական բանակում կամ նավատորմում:

տոսի և նրա մոր սրբապատկերները և սրբի աղոթքների օգնութեամբ (բուժ-
վեց), և կանգուն ու առողջ վերադարձավ իր զորամասը: Ջինվորներն սկսեցին
հարցնել, թե ինչպես և ով բուժեց այդ անբուժելի հիվանդութունը: Նա ա-
մեն ինչ պարզաբանեց, որ Պրոկոնիսոսում ապրում է մի աքսորական վանա-
կան Ստեփանոս անունով, նա աղոթեց և տվեց ինձ համբուրելու երկու պատ-
կեր, մեկը տղամարդու, որի վրա գրված էր «Քրիստոս», մյուսը կնոջ և ասում
էին, որ դա աստվածածինն էր: Երանք համբուրելուց հետո անմիջապես
առողջացա՞: Անօրեն (զինվորները) ծիծաղեցին և ասացին նրան. «Ամոթ քեզ,
Ստեփանոս, դու կուպաշտ դարձար»: Նրանք ամբաստանում են նրան թրա-
կիաչի արխիսատրապի⁷ առաջ: Վերջինս այդ իմանալով, անմիջապես Ստեփան-
ոսին ուղարկում է կայսեր մոտ: Բռնակալը նրան ընդունեց և իմացավ
նրանից ամեն ինչ: Ապա ասաց. «Իսկ դու դեռ շարունակում ես երկրապա-
գել այդպիսի պատկերներին, ինչպես սովորեցրեց քեզ այն հիշատակութեան
անարժանը (Ստեփանոս Նորավկան Ն. Բ.):»: Ջինվորը զղջաց և նզովեց որպես
մոլորված, որի համար էլ այդ սրիկան (իմա կայսրը Ն. Բ.) նրան շնորհեց
հարյուրապետի աստիճան, որպես Քրիստոսի պատկերը անպատվոգի: Բայց
արդարադատ աստվածը, որն աղաղակում է մարգարեի բերանով, թե ճերանց,
ովքեր փառաբանում են ինձ և փառաբանելու եմ, իսկ նրանք, ովքեր ինձ ստո-
րաքնում են, անպատվվելու են՝ գերադասեց արդարութունը անարդարութու-
նից: Աստիճան ստացած ուրացողը մայրաքաղաքից դեպի իր բնակավայրը
վերադառնալու ժամանակ, ընկավ ձիու վրայից, տրորվեց նրա սմբակների
տակ և մեռավ...»:

2. — Հողի վաճառք Տրապիզոնի սբ. Եվգենիոսի վանքի և Բայբերդի հայ
վանքի միջև: Сборник источников по истории Трапезундской империи,
издал Пападопуло-Керамевс, С.-Петербург, 1897, том 1, стр. 97—100):

«Բայբերդ (Պալաերտ) քաղաքից Նիկողայոսը և Հովհաննեսը, որոնք երկուսն
էլ հոգևորականներ էին, ամենաազնիվ Հովհաննես պատրիկին այն խալդին
ենթակա, ինչպես նաև նույն եպարխիաչի եպիսկոպոս Դրիգորիոսը, հոգով
շատ էին սիրում սուրբ վկա Եվգենիոսի վանքը: Նրանք զանազան առիթնե-
րով և հաճախ նվերներ էին բերում այդ վանքին: Ամառ ժամանակ այդ վան-
քի վանահայր Եփրեմը այնտեղ էր գնալու զանազան զործերով: Վերոհիշյալ
երեցները ուրախացան նրա գալու լուրն ստանալով: Ամառվա մի օր վանա-
հայր Եփրեմը եկավ այդ շրջանները, իսկ երեցները ուրախացան ու ներկայա-
ցան նրան, համբուրեցին նրան և որպես նվեր, բերեցին մեկ կառք, որը
բարձրված էր հացով և այլ պարենով, ինչ որ իրենց վայել էր: Վանահայրը
նպատակ ուներ այստեղից մշակելու հող գնել և ավելացնել (սբ. Եվգենիոսի)
վանքի տիրույթներին: Վերոհիշյալ երեց Նիկողայոսը կառքը հանձնեց իր
ծառաներին, որպեսզի նրանք տուն տանեն այն: Այնպես պատահեց, որ ճա-
նարհին կառքը ջարդվեց եզների կողմից, որի պատճառով էլ երեց Նիկողա-
յոսը լցվեց տխրութեամբ և ամոթով: Այն ժամանակ օգնութեան հասավ ձիու
վրա նստած վկա Եվգենիոսը և կանգնեց նրա տան դռան առաջ, և ուզում էր
Կրան մխիթարել: Երեցը հենց որ տեսավ նրան, զարմացած ասաց. «Տեր,

⁷ իմա՝ ստրատեգին:

ցած իջի՞ր ձիուց, որպեսզի քեզ ճանաչեմք: Սուրբն անմիջապես ձիուց ցած իջավ և ձևացրեց, որ ինքը իբր հյուրընկալվել է Երեցի կողմից և գովեց նրան դրա համար և շնորհակալություն հայտնեց, իբր թե իրեն ցույց արված հյուրընկալության համար: Այդ միջոցին կառքը, նախկինի նման սարքին էր Երեցը: Երեցը հասկացավ, որ նա սուրբ Եվգենիոսն է, շշմեց այդ տեսիլքի վրա և անչափ ուրախացավ, որից հետո աղաչում էր վանահայր Եփրեմին, որ նա ուրիշ տեղից մշակելու հող չգնի. այլ միայն իրենից, որովհետև, ինչպես ինքն էր ասում, իր հողերը տարբերվում են ուրիշների հողերից իրենց բերրիությունով և պտղաբերությամբ: Նա խոստացավ նաև ամեն տարի առանձին բերք տալ (սբ. Եվգենիոսի) վանքին: Այդ բոլորի մասին պատմում են, թե Երեցը ասաց սրբին, իսկ վերջինս իր հերթին նույն օրն իսկ ասաց վանահորը և հանձնարարեց, որ բացի Երեց Նիկողայոսի ուրիշ ոչ ոքի կալվածքը չգնել, քանի որ նա խոստացավ տարեկան առանձին բերք էլ տալ մեր վանքին և, բացի դրանից, նրա հողերը բերրի են և շատ: Երեցը գնաց վանահոր մոտ և նրան պատմեց իր տեսած տեսիլքը, իսկ ինքը, իր հերթին, տեղեկացավ այն տեսիլքի մասին, որ վանահայրը տեսավ՝ մեծ Եվգենիոսի նրան հանձնարարածի մասին: Երկուսն էլ հիանալով սրբի ցուցաբերած հոգատարության վրա, օգտաբեր համաձայնության եկան և համաձայնագրով (οια γραμματείου), իրենց որոշած գնով, Երեցը վանահորը տվեց մի բերրի մշակելի հողակտոր՝ տեղական մոտ հիսուս մեդիմի չափով: Հաջորդ տարին վանահայր Եփրեմը գալիս է (Բայբերդ) բերքահավաքի և մրգահավաքի համար: Սակայն Երեց Նիկողայոսը սկսեց ձգձգել սրբին խոստացած բերքի հանձնումը: Սրբի գրեղմամբ վանահայրն էլ իր հերթին սկսեց ձգձգել նրա հողի գնումը: Նրանք երկար վիճեցին: Երեցն ասաց. «Վաճառքի սահմանված ժամկետի հետաձգումը, ով վանահայր, համաձայն օրենքների, հնձից և բերքահավաքից առաջ է կատարվում: Նրան պատասխանում է վանահայրը. «Դանի որ դու, տեր, արդեն ձգձգում ես տարեկան բերքի հանձնումը, որի շուրջը արդեն համաձայնվել է իր սրբի հետ, ես էլ իմ հերթին հետաձգում եմ կալվածքի գրնումը: Երեցն այդ խոսքերի վրա անելանելի դրություն մեջ ընկավ, ոչ թե այն պատճառով, որ պետք էր վերադարձներ իր ստացած յուրմարը, այլ որովհետև այդ դրամը որպես ոռճիկ տվել էր ծերունիներից ոմանց, որոնք գնում էին Երուսաղեմ և չունեի այն վերադարձնելու: Երեցը մտաբերեց այն, ինչ ասել էր վանահորը, համոզվեց, թե ինչպիսի և ինչքան մեծ է երդմնազանցության մեղքը և արդեն մտածում էր, թե ավելի լավ է տալ այդ բերքը վանքին, ինչպես որ խոստացել էր սրբին, քան թե ստել սուրբ հոգուն: Վասնհայրը ևս, տեսնելով ծերունու տրամադրությունը, որոշեց պաշտպանել կատարված գնումը...» (Ի՞նչերը Երեցը երազում տեսնում է սբ. Եվգենիոսին, որը նրան ասում է) «... քանի որ դու, ով երեց, սուրբ հոգու շնորհքով ես ընթանում, հարցը լուծիր հարմար և խոհեմ կերպով: Մենք հենց դրա համար վանահայր Եփրեմի հետ եկանք, իսկ դու բերքը, ինչպես որ համաձայնվել էիք և այդ հաստատվել էր վանահոր կողմից, սուր և մնացեք սիրով, ինչպես ասում է առաքյալը: Երեցը շատ զարմացավ սրբի խոսքերի վրա, ինչպես նաև նրա կատարած մեղքերունների սուրբ գրքից և ասաց նրան. «Ով դու Քրիստոսի վկա, որտեղից գիտես հայերեն խոսել (αρμενιστι ομιλεσθαι) և արտասանել սուրբ գրքի բարի ասույթները...»:

Յ. Ապակու արտադրության մասին Բասեմում:
(Παπαδοπουλο-Κεραμευς, υκ. соч., стр. 107—108):

«Կա ինչ որ Փասիանե անունով երկիր (Փասիանի շորա) որն, ինչպես գիտեմ, գտնվում է Պերսարմենիայի շրջանում (Περσαρμενίας μεση): Այժմ նա, իսմայելացիների կողմից զավթվելուց հետո, օտար անուն ստացավ: Այստեղ լինում է ապակի (ύαλος τουνυν εχει ειωθε γινεσθαι): Այնպես որ, ով ապակե առարկաների (σκευων υελινων) կարիք է զգում, գնում է այնտեղ գնելու: Ահա վանքի (իմա սր. Եվգենիոսի Հ. Բ.) վանահայրը, այն հռչակավոր Եփրեմը, այնտեղ է ուղարկում Օրեստեսին և Մատթևոսին՝ գնելու համար կանթեղներ, ինչքան որ հարկավոր էին (սրբի) տոնին (վանքը) գեղեցկացնելու համար: Նրանք գնացին և գնեցին դրանք: Վերադարձին մնացին Բայբերդ, ինչպես որ նրանց հանձնարարվել էր, վանքին պատկանող բերքը հավաքելու և այն ամբարները տեղափոխելու համար: Վանականները այդ կատարեցին: Արդեն աշուն էր, բերքը հավաքված, ինչպես որ ասացինք: Այդտեղի (իմա Բայբերդի Հ. Բ.) բոլոր երկրագործները այդպես են անում. որովհետև ձմեռը շուտ է վրա հասնում: Հոկտեմբերից հետո անմիջապես ձյուն է գալիս, քամի, ուժեղ սառնամանիք, և այդպես մինչև մայիս: Երկու ամիս հետո, երբ արդեն ցանքսն էլ կատարել էին, (վանականները) վերադառնում էին տուն: Ճանապարհին վրա է գալիս վաղահաս ծանր ձմեռը, ուժեղ անձրևներ, հորդառատ և անդադրուն: Այդ պատճառով ճանապարհն դարձել էր դժվարանցանելի: Նրանք վերադարձան Փագասե (Փագասե), ուր ստիպված փնացին ամբողջ դեկտեմբերը: (Նրանք օգնություն են դիմում սր. Եվգենիոսին, ասելով) «... Եվգենիոս, ով դու մեծագույն և ամենահզոր զորավիգ, օգնիր մեզ գոնե անցնենք Զիխուլիտոս (վայրը) (το του Ζυχολιτου):» (Սր. Եվգենիոսը հարցնում է նրանց) «... Որտեղից եք գալիս և ինչու եք այդքան հուսահատ»: Նրանք պատմեցին նրան ամեն ինչ, թե ինչպես վանահայրը իրենց ուղարկեց Փասիանե, ինչպես իրենք գնեցին լուսատու կանթեղները, վերադարձը Բայբերդ, բերքահավաքը, ցանքսը, այնտեղից վերադառնալը, սաստիկ ձմեռը, ճանապարհների փակվելը, այնտեղ հասնելը և այնտեղից դուրս գալու դժվարությունը: (Սր. Եվգենիոսը խոստանում է առաջնորդել նրանց): «... Նրանք այդ երկրից մի քանի ուժեղ տղամարդկանց բարձեցին ապակե առարկաներով լի զամբյուղները և վերադառնում էին տուն: Եեռը ծանր էր, ճանապարհը վատ և վանականները մտածում էին ետ վերադառնալ: (Նորից սր. Եվգենիոսը նրանց հուսադրում է, որից հետո) «... Նրանք անցնելով փնացած դժվարանցանելի ճանապարհը, իջնում են Կուրատորիոն (Κουρατορειον), որտեղ ուղեկցող Եվգենիոսը աներևութացավ: Իսկ Օրեստեսն Մատթևոսը և կանթեղները կրողները հասան սուրբ վանքը. ուր վանահորը պատմեցին իրենց հետ պատահածը և բոլորը միասին շնորհակալություն հայտնեցին աստծուն և նրա սուրբ վկային»:

4. — Նիկիայի բյուզանդական կայսր Թեոդորոս Լասկարիսի ժողովական բողոքը Կիլիկիայի թագավոր Լևոն 2-րդին:

12-րդ դարի երկրորդ կեսից սկսած Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի միջև աշխույժ բանակցություններ էին գնում երկու երկրների

փոխհարաբերությունների բարելավման համար: Նրկու պետություններն էլ այն ժամանակ այդ գործի հաջողության նախադրյալ էին համարում դավանաբանական վեճերի լուծումը: Բյուզանդիան, սակայն, այդ գործում մտադիր չէր դիմելու գիշումների և հույս ունեւր, որ իրեն կհաջողվի հայադավաններին ենթարկել քաղկեդոնականության: Դրա համար եկեղեցիների միություն միջոցով երկու պետությունների միջև փոխհարաբերությունների բարելավումը չիրականացավ: Այն անհաջող ավարտվեց Իսահակ Անդեղոս կայսեր ժամանակ⁹: Բայց դա չեւր նշանակում, որ երկու պետությունները հրատարակեցին միմյանց մոտենալու գաղափարից: Ե՛վ Կիլիկիայի, և՛ Բյուզանդիայի համար շատ մեծ նշանակություն ունեւր փոխադարձ դաշինքի կնքումը, քանի որ երկու երկրներն էլ ցանկանում էին դաշնակից ունենալ սելջուկ թուրքերի դեմ: Դրա համար էլ նրանք հետագայում դիմեցին այլ միջոցների՝ փոխհարաբերությունների բարելավման համար, խնամիական կապերի հաստատմանը:

Հանրահայտ փաստ է, որ միջին դարերում պետությունների միջև խոնամիական կապերի հաստատման զրդապատճառները զուտ քաղաքական էին: Այդ տեսակետից հետաքրքիր է հիշել Կոնստանդին Պալլի դիմումը ժողովականներին Լեոն 2-րդ թագավորի մահից հետո կայացած ժողովում: Այդ մասին Սմբատ Սպարապետը իր Պատմության մեջ գրում է. «Պարոն Կոստանդին Պալլս ժողովեաց զամէն եկեղեցականքն և զօրքն Հայոց և ասաց. թէ պարոնայք դուք դիտէք, թէ լինչ նեղութիւն գաի զաշխարհս ու զմեր պարոնին լետմնացքն, ու Աստուծոյ ինչչի յայս բերի, ու մեր պարոնադուստրս կարգման եղաւ. ամէնչ թէտպիրվեցուք որ մեզ պարոն բերեմք. զի ես ուզեմ՝ որ իմ տանն և իմ որդւոցն անդորրութիւն առնեմ: Նա ամէնն թէտպիրեցան շատ օրեր, և հայնց պատահեցին՝ որ քան ի յայլ տեղաց՝ բերեն զԱնտաքոյ Բրընձին որդին գՖիլիպն, զի ի մօտս և, և լավ կարի, օգնել մեզ ի մեր ամէն կարիք»⁹:

Սա տեղի ունեցավ 1222 թվականին: Դրանից առաջ, 1213 թվականին, երբ Լեոն 2-րդը իր եղբայր Ռուբեն 3-րդի զուստր Ֆիլիպինեին կնուծյան տվեց նորաստեղծ Նիկիական պետության առաջին թագավոր Թեոդորոս Լասկարիսին, զրդապատճառները դարձյալ քաղաքական էին: Նրկու պետություններն էլ ուզում էին բարելավել իրենց փոխհարաբերությունները:

Խնամիական կապերի քաղաքական զրդապատճառների մասին Կիլիկյան Հայաստանում խոսել է Դևոնդ Ալիշանը: Իր նշանավոր «Սիսուան»-ում նա գրում է, որ 1194 թ. Ռուբեն 3-րդի մեծ աղջիկը՝ Ալիսը ամուսնացավ Անտիոքի բրնձի որդի Ռեմոնդի հետ Եվասն հաստատելոյ զխաղաղութիւն ի միջև իւրեանց»¹⁰, այն է Կիլիկիայի հայկական պետության և Անտիոքի իշխանության միջև: Նույն Ալիշանի խոսքերով, ինքը Լեոն 2-րդ ամուսնացավ Անտիոքի բրնձի եղբոր կնոջ դստեր՝ Զապելի հետ, որովհետև թայսպէս յամարէր յապահովել զահէակ կողմն, զարեւելեանն տերութեան իւրոյ»¹¹:

Կիլիկիայի համար մեծ նշանակություն ունեւր իր հյուսիսային և արև-

⁹ Տե՛ս Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Բանբեր Մատենագարանի», Նո. 4, էջ 280:

¹⁰ Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկվո, 1856, էջ 111:

¹¹ Ալիշան, Սիսուան, էջ 441:

¹² Նույն տեղում:

մրտյան օահմանների ամրագնդումը Իկոնիայի սելջուկների ստնձգութլուններից: Դրա համար անհրաժեշտ էր ընդհանուր լեզու գտնել Նիկիական բյուզանդական պետութլան հետ: Դրան դեմ չէր նաև Նիկիական կայսրութլունը, որովհետև նա ևս իր հերթին ուզում էր Իկոնիայի սուլթանութլան թիկունքում ունենալ դաշնակից: Եվ անա 1213 թ. երկու երկրների միջև բանակցութլուններն ավարտվում են հաջողութլամբ: Լեոն 2-րդը Նիկիայի պետութլան կայսր Թեոդորոս Լասկարիսին կնութլան է տալիս իր եղբայր Ռուբեն 3-րդի դուստր Ֆիլիպինին¹²: Այս փաստը հալկական սկզբնաղբյուրներում հիշատակված է մի մանր ժամանակագրութլան մեջ, որ Ղ. Ալիշանի կարծիքով Կոստիկոսի տեր Հեթում պատմիչի գրչին է պատկանում¹³: Այն վերնագրված է Մասումութլին ազգին Ռովբինանց թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ¹⁴: Այնտեղ գրված է, որ շղուստրն Ռովբինի Ֆիլիպն եղև կին թագաւորին Յունաց Լաշքարէ, եւ ծնաւ որդի մի Կոնստանդին անուն, այլ ոչ ժամանեալ ի մեծութլին վախճանեցաւ փոքր¹⁵:

Բյուզանդական սկզբնաղբյուրներում այս փաստը արձանագրված է Գեորգ Ակրոպոլիտեսի ժամանակագրութլան մեջ: Նա գրում է, որ Թեոդորոս Լասկարիսը իր կնոջ՝ Աննայի մահից հետո կին բերեց Հայաստանից (γίγατεο οε εε Ἀρμενίων γυναικα)¹⁶:

Այնուամենայնիվ հայ-բյուզանդական դաշինքն այն ժամանակ երկարատև չէր: Կոնկրետ հայտնի չէ, թե որ թվականին Թեոդորոս Լասկարիսը, որոշելով իր հարաբերութլունները բարելավել Կոնստանդնուպոլիսի տիրացած խաչակիրների հետ, այս անգամ ամուսնանում է Կոնստանդնուպոլիսի խաչակիրների թագավոր Ռոբերտի քրոջ հետ¹⁷: նախապես գծովելով իր հայ կնոջ հետ, որին և ուղարկում է իր հայրենիք՝ Կիլիկիա (ουσαρσετταο οε αροο αυτην επι την ιδιαν πατριδα την Կιλικιαν εχπεμπει)¹⁸: Նույն Ակրոպոլիտեսը ցույց է տա-

¹² Ղ. Ալիշանը (տե՛ս Սիսուան, էջ 441) այս դեպքում ևս ընդգծում է սույն ամուսնութլան քաղաքական զրդպատճառները, զրելով, որ Կիլիկիայի պետութլունը զիմեց զրան շյամրութլին աջոյն, այն է արևմտայնոյն, ուր առ կռան կայր ախոյեան գոռ ե այլադէն սուլտանն Բկոնիայիս:

¹³ Տե՛ս Սիսուան, էջ 549: Այդ հաստատում է և Վ. Հակոբյանը. Տե՛ս Մանր ժամանակագրութլուններ 13—18-րդ դդ., հատ. Դ., Երևան, 1956, էջ 95:

¹⁴ Հրատարակվել է Ա. Տեր-Միքելյանի կողմից հետևյալ հրատարակութլան մեջ. Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 204—212: Վերահրատարակվել է Վ. Հակոբյանի կողմից. Տե՛ս Մանր ժամանակագրութլուններ, հատ. Բ. էջ 100—105:

¹⁵ Նույն տեղում, էջ 103:

¹⁶ Տե՛ս Georgii Acropolitae Annales, Bonnae, 1836, p. 29. Այդ մասին հիշատակում է և մի այլ բյուզանդական ժամանակագրութլուն: Տե՛ս C. Sathas, Bibliotheca graeca medii aeui, vol. VII, p. 462.

¹⁷ Տե՛ս Georgii Acropolitae Annales, p. 34.

¹⁸ Նույն տեղում, էջ 29: Ռոբերտը Կոնստանդնուպոլիսի խաչակիրների թագավոր դարձավ 1221 թ. մարտի 25-ին, այնպես որ վերոհիշյալ դեպքը չէր կարող տեղի ունեցած լինել նշված ժամանակից առաջ, բայց ոչ էլ 1222 թվականից ուշ, քանի որ Լասկարիսը հանկարծամահ եղավ դեռ իր հիսուն տարին չլրացած՝ 1222 թվականին: Այս դեպքը տեղի է ունեցել Լեոն 2-րդի մահից հետո (1919 թ. հետո): Որ Թեոդորոս Լասկարիսը ամուսնանալով Կոնստանդնուպոլիսի խաչակիրների թագավորի քրոջ հետ, հետապնդում էր քաղաքական նպատակներ, ցույց է տալիս և այն հանգամանքը, որը Լասկարիսը միաժամանակ բանակցութլուններ էր վարում, որպեսզի իր դուստր Եվդոկիային կնութլան տա նշված Ռոբերտին:

լիս, որ, երբ Թեոդորոս Լասկարիսը վախճանվեց (1222 թ.), նա ուներ միմիայն մեկ որդի իր հայ կնոջից, որն այն ժամանակ ութ տարեկան էր¹⁹: Հայկական սկզբնաղբյուրների տվյալների համաձայն այդ որդին կոչվում էր Կոնստանդին: Օրենքով այդ տղան պեաք է ժառանգեր հոր գահը, բայց Ակրոպոլիտեսի ասելով՝ որովհետեւ նա փոքրահասակ էր, Լասկարիսը իր թագավորությունը թողնում է իր փեսա Հովհաննես Դուկասին: Լասկարիսի որդին, ինչպես վերևում ասացինք, ըստ հայկական աղբյուրների թոչ ժամանեալ ի մեծութուն վախճանեցաւ փոքր»:

Ըստ երևույթին Ֆիլիպինեի և Թեոդորոս Լասկարիսի ամուսնությունը նախորդել են բանակցություններ, որոնց մասին մեզ հասել է մի ունիկալ փաստաթուղթ՝ Թեոդորոս Լասկարիսի հրամանով գրված մի ժողովական նամակ՝ ուղղված Կիլիկիայի թագավոր Առն 2-րդին, որի վրա ենք հրավիրում ընթերցողների ուշադրությունը: Այն ակնառու կերպով ցույց է տալիս Կիլիկիայի հայկական պետության հզորությունը 13-րդ դարի սկզբում, որի հետ ստիպված հաշիվ էին նստում նրա հարեանները: Նամակը մեզ հասել է 1687 թ. Մոսկվայի պատրիարքարանի մատենադարանի համար Երուսաղեմում, տեղի հույն պատրիարք Դոսիթեոսի կարգադրությամբ արտագրված մի ձեռագիր մատյանում, որն այժմ գտնվում է Մոսկվայի Պատմական թանգարանի գրադարանում: Հասկանալի է, որ Մոսկվայի ձեռագրի իսկականը կարող է մեզ հասած լինել Երուսաղեմի հունական պատրիարքարանի ձեռագրերի թվում:

Մեզ հետաքրքրող նամակը 1874 թ. հրատարակել է Ա. Պավլովը Նովորոսիյսկի համալսարանի գիտական տեղեկագրում²⁰: Ստորև հայերեն թարգմանությամբ մենք մեջ ենք բերում ծավալով փոքր այդ նամակի լրիվ աղբյուր, որը վերնագրված է «ժողովական թուղթ» (συνόδιον γράμμα):

«Հայաստանի, Կիլիկիայի և Բսավրիայի ամենաազնիվ թագավոր (թիլզաս): Խաղաղություն ենք քեզ ցանկանում ի Կրիստոս, ով միացրեց բաժանվածներին: Դու աստվածային սիրով ուղեցիր մեր բարեպաշտ, հզոր և սուրբ թագավորի հետ ազգակցական սեր և միություն հաստատել: Մեր հօրը և սուրբ թագավորը հրավիրեց մեր սինոդը, հայտնելով ի միջի այլոց այն, որ քո պայծառափալ ազնվականությունը, որն ազգակցական կապերի մեջ է մտնում նրա թագավորության հետ և նրան կնություն է տալիս իր դստեր, պահանջեց, որ սինոդական գրավոր փաստաթղթով հաստատվի, որ քո ազնվականության դստեր և նրա թագավորության ամուսնությունը կատարվի միմիայն կանոնական արարողության պահպանմամբ և կատարյալ ծիսակատարությամբ: Ահա քո պահանջի և թագավորի (իմ Թեոդորոս Լասկարիսի Հ. Բ.) հրամանի համաձայն մենք հավաքվեցինք ժողովի: Մենք ևս նպատակահարմար համարեցինք, ինչպես քո ազնվականությունը պահանջեց, իսկ թագավորն էլ իր կողմից այդ բանին համաձայնվեց, շարադրել սույն նամակը քո ազնվականությունը, որին հաղորդում ենք. ես պատրիարքս, ես Բուլղարիայի արքե-»

¹⁹ Georgii Acropolitae o. c., p. 34.

²⁰ (А. С. Павлов), Замечательнейшие греческие рукописи канонического содержания в Московской синодальной (бывшей патриаршей) библиотеке, „Записки Императорского Новороссийского Университета“, том XIII, Одесса, 1874, стр. 173—174. Նույն հեղինակը համառոտ ուսումնասիրությամբ վերահրատարակել է, А. Павлов, Синодальная грамота 1213 года о браке греческого императора с дочерью армянского князя, Византийский Временник, том 4, вып. 1—2, С. — Петербург, 1897, стр. 160—166.

պիսկոպոսս և մենք Կոնստանդնուպոլսի պատրիարքական մեծագույն աթոռին ենթակա և այժմ այստեղ ներկա եղող քահանայապետներս, ինչպես նաև եպիսկոպոսներս, ժանոթանալով հարցին, համոզվեցինք, որ ինքը՝ հզոր և սուրբ թագավորը, աստուծո շնորհիվ, բարեպաշտ է, նա ելնում է աստվածային և սուրբ կանոններից և որոշումներից, նա չի ուզում ոչինչ անել արտաքո օրինական և կանոնական արարողություն: Մենք կատարելապես համոզվեցինք դրանում և սույն նամակով ժանոթացնում ենք քո աղնվականությունը, որ մեր հզոր և սուրբ թագավորը չի միանա քո հարազատ դստեր հետ, մինչև չկատարվեն եկեղեցու կանոնական և օրինական բոլոր ծիսակատարություններն ու հանդիսակարգը՝ ըստ մեր ամենասուրբ մեծ եկեղեցու հնամենի սրբազան ավանդությունների, որոնք վերաբերում են այսպիսի պարագաներին: Նախօրոք ամեն ինչ կատարվելու է, որին հաջորդելու է ամուսնություն ծեսը: Այդ բոլորը մենք մտադիր էինք կատարելու, եթե նույնիսկ քո պայծառափալ ազնրվականությունը այն չպահանջեր: Մենք քաջ գիտենք, ինչպես վերևում շեշտեցինք, որ մեր թագավորը այսպիսի հարցերում բարեպաշտ է և պահպանում է ու պաշտպանում կանոնական և օրինական ավանդությունները: Կո ազնվականությունը թող հեռու լինի ամեն մի կասկածից ու տարակուսանքից: Որպեսզի դու այդ բանում առավել ևս համոզված լինես և ապահով, մենք մեր ձեռքով ստորագրեցինք սույն նամակի տակ: Ամիս հոկտեմբեր, ինդիկտոնի երկրորդ տարի, 6722 թվական²¹:

(Ստորագրությունները)․

Միքայել կամաֆն աստուծո արքեպիսկոպոս Կոնստանդնուպոլսի նոր Հոռոմի.
Հովհաննես կամաֆն աստուծո արքեպիսկոպոս ամենայն Բուլղարիո.
Նիկողայոս՝ մետրոպոլիտ Եփեսոսի.
Նիկիփորոս՝ մետրոպոլիտ Կիզիկոսի.
Նիկիփորոս՝ Սարդիսի.
Թևոդորոս՝ Լաոդիկիայի.
Նիկողայոս՝ Փիլազելիիայի.
Սերգիոս՝ Պրուսայի Թևուպոլսի.
Կոնստանդին՝ արքեպիսկոպոս Գիոսի.
Նիկիփորոս՝ Լոպադիոնի և Մելիտոպոլսի.
Լևոն՝ Մելագիոնի:

Р. М. Бартияян

Армяно-византийские заметки

(Резюме)

Статья посвящена некоторым сведениям византийских источников, имеющим значение для изучения различных вопросов истории средневековой Армении. Сведения извлечены из византийских житий святых разных времен.

Первая заметка основана на житии святого Стефана Нового (умер в 765 г.). В нем имеется упоминание о том, что в указанное

²¹ Այն է, աշխարհի արարչագործությունից, որը համապատասխանում է մ. թ. 1213 թվականին:

время во Фракии находилось „армянское войско“, состоящее из иконоборцев. По мнению автора статьи, это войско состояло из переселенных в 756 г. императором Константином V еретиков-павликиан.

Вторая и третья заметки основаны на труде трапезундского митрополита Иоанна Лазаропула (XIV в.), посвященного чудесам св. Евгения. Для арменоведения представляют интерес его данные о купле-продаже земли между трапезундским монастырем св. Евгения и армянским монастырем в Байберде), об использовании местных жителей Байберда в сельско-хозяйственных работах на землях, принадлежащих трапезундскому монастырю в Байберде, а также упоминание о производстве стекла и стеклянных сосудов в армянской средневековой области Басен.

Четвертая заметка посвящена синодальной грамоте 1213 г. Никейского императора Феодора Ласкариса армянскому Киликийскому царю Левону II относительно установления свойственных связей между правителями двух государств, мотивы которых были сугубо политическими.

Hr. M. Bartikian

Armeno-Byzantine notes

Summary

The article is devoted to some information on Byzantine sources which are important in the study of different questions of medieval Armenian history. The information has been extracted from the biographies of saints of various periods.

The first note is based on the biography of Stephanus Junior (d. 765). It has been mentioned that an „Armenian army“ consisting of iconoclasts existed in Thrace at the stated time. According to the opinion of the author of this article the army was composed of heretics-paulicians transmigrated by emperor Constantine V in 756.

The second and the third notes are based on the work of John Lazaropullus, the metropolitan of Trebisond (XIV c.) devoted to the miracles of Saint Eugenius. Of great interest to Armenian history is his information about the sale and purchase of land between Saint Eugenius' monastery of Trebisond and the Armenian monastery in Bayberd, on the usage of the Bayberd inhabitants to farm the lands in Bayberd belonging to the monastery of Trebisond, as well as mentioning the production of glass and glass-vessels in the armenian medieval district of Bassen.

The fourth note is devoted to the synodic deed of 1213. of emperor Theodore Laskaris of Nicaea to the Armenian king Leon II concerning the establishment of relations by marriage between the rulers of the two states, the motives of which were particularly political.